# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

### ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԵՂՐԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ Լ.ԳԱԼՍՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ

**19 ապրիլ 2024թ.**

*«ԿԱՈՒ ՊԵՐՖՈՒԴ» ՍՊԸ տնօրեն Աղասի Դանիելյանին*
*էլ.փոստ:* *cowperfood@yandex.com*
*Հասցե՝ ք.Երևան,Խուդյակով 175/1*
*ՀՎՀՀ 01059264*

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**

**Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ**

**Հարգելի մասնակից**

Ծաղկաձոր համայնքի **«Մեղրաձոր գյուղի Լ.Գալստյանի անվան նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի** կողմից 23.11.2023թ. հայտարարված **«ԾՄՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ-24/1»** ծածկագրով ընթացակարգի **2,4,10,14,17,20,24,31,32,33,34,49** չափաբաժինների արդյունքում Ծաղկաձոր համայնքի **«Մեղրաձոր գյուղի Լ.Գալստյանի անվան նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-**ի (այսուհետ՝ Գնորդ)և **«ԿԱՈՒ ՊԵՐՖՈՒԴ» ՍՊԸ**-ի (այսուհետ՝ Վաճառող)միջև 26 դեկտեմբեր 2023թ.կնքվել է թիվ **«ԾՄՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ-24/1-3»** ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017թ.մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետը և Պայմանագրի 8.3 կետը՝ մեր կողմից իրականացված վերահսկողության արդյունքում արձանագրվել է, որ **«ԿԱՈՒ ՊԵՐՖՈՒԴ» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ** *01059264*) **խախտել է գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, այն է՝ Մասնակցի իրական շահառու հանդիսացող անձը, հանդիսանում է մի շարք ընկերությունների իրական շահառու, որոնք ներառված են գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N.526-Ն որոշմամբ սահմանված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 121-րդ կետի պահանջների՝ «Մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց**

**գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:»:**

Քաղաքացիական օրենսգրքի 466 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:»

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները և իրավական կարգավորումները, Գնորդը թիվ «**ԾՄՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ**-24/1-3» ծածկագրով պայմանագրի **2,4,10,14,17,20,24,31,32,33,34,49** չափաբաժինները համարում է միակողմանի մասնակի լուծված՝ ***2755753 /երկու միլիոն յոթ հարյուր հիսունհինգ հազար յոթ հարյուր հիսուներեք/***ՀՀ դրամ գումարի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները, համաձայն որի՝ «պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին.»:

Գնորդը գնման ընթացակարգը միակողմանի մասնակի լուծելու մասին որոշում կներկայացնի Լիազորմարմին՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի պահանջները:

**ՏՆՕՐԵՆ** **ԱՐՄԻՆԵ ՆԱԶԱՐՅԱՆ**